« 21 » օգոստոս 2024թ. No 4556 - Ա

«ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-20 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 10 տեսական և 15 գործնական կրեդիտ. դասավանդողներ Վիգեն Խաչատուրյանին՝ ՇՄՋ 4 տեսական և 6 գործնական կրեդիտ, Վաչիկ Հակոբյանին՝ ՇՄՋ 4 տեսական և 6 գործնական կրեդիտ, Հովհաննես Թամազյանին՝ ՇՄՋ 2 տեսական և 3 գործնական կրեդիտ
- Կոնտակտ՝ 010235310

Օր 1		
2 ժամ	**Դասախոսություն** Ներածություն: Իրազեկում առաջին բուժօգնության պրոֆեսիոնալ վարքագծի մասին: Հասկացություն աղետի մասին: Առաջին բուժօգնության կազմակերպում արտակարգ իրավիճակների պայմաններում: Տեղանքի զննում, տուժածի առաջնային և երկրորդային զննում: Օրենսդրական պարտավորություններ առաջնային բուժօգնություն մատուցելու ընթացքում: Միջազգային համագործակցություն առաջնային բուժօգնության ծրագրերի հետ. ՖԵՄԱ, ԻՆՍԱՐԱԳ և ԱՄՆ «Մասաչուսեթսի» ԲԿ	Հովհաննես Թամազյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Մասնակիցների վրա աղետի տարբեր տեսակների ժամանակ կատարվող քայլերի ցուցադրում: Սեփական անվտանգության համար օգտագործվող միջոցների, նաև ձեռքի տակ եղած միջոցների ցուցադրում: Տեղանքի զննում, բուժօգնություն կազմակերպողի և տուժածի անվտանգության և ռիսկերի գնահատում: Մասնակիցներին կարծեցյալ տուժածի վրա առաջնային և երկրորդային զննման տեխնիկայի ցուցադրում. սկիզբը, հաջորդականությունը մինչհոսպիտալային փուլում	Հովհաննես Թամազյան

Օր 2		
2 ժամ	**Դասախոսություն** Շնչառության խանգարումներ, շնչուղիների անցանելիություն ABC: Օտար մարմնի հեռացում շնչուղիներից (Հայմլեկ վարժանք): Սուր շնչառական խանգարում: Արհեստական շնչառություն. ցուցումները (բերան-բերան, բերան-քիթ, Ամբուի պարկ)	Վաչիկ Հակոբյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Կարծեցյալ տուժածի և մանեկենի վրա արհեստական շնչառության տեխնիկայի ցուցադրում (բերան-բերան, բերան-քիթ, Ամբուի պարկ): Կարծեցյալ տուժածի կամ մանեկենի վրա Հայմլեկ վարժանքի ցուցադրում (օտար մարմնի դուրսբերումը շնչուղիներից) տուժածի կանգնած, նստած և պառկած վիճակներում: Մասնակիցների կողմից մանեկենի վրա կրիկոտոմիայի տեխնիկայի ցուցադրում. ձեռքի տակ ունեցած միջոցներով կրիկոտոմիա կատարելու տեխնիկան	Վաչիկ Հակոբյան
Օր 3		
2 ժամ	**Դասախոսություն** CPR, ՍԹՎ, սրտի անուղղակի մերսում. ցուցում, կատարման տեխնիկան՝ հաշվի առնելով էթիկայի կանոնները (կրոնական պատկանելիությունը, դավանանքը և միջավայրը): CPR ցուցումը, կլինիկական մահվան փուլ, CPR-ի ավարտը արդյունավետության և անարդյունավետության դեպքում: Կողքի անվտանգ դիրք (ԿԱԴ): Անգիտակից վիճակներ (ուշագնացություն, կոլապս, կոմա): Բժշկական մանիպուլյացիաներ (միզուղիների, անոթների կաթետերիզացիա)	Վաչիկ Հակոբյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Մասնակիցների կողմից մանեկենի վրա մեկ և երկու կատարողի դեպքում սիրտ-թոքային վերակենդանացման ցուցադրում: Մասնակիցներին սրտի անուղղակի մերսման դեպքում ձեռքերի դնելու դիրքի, մերսման խորության, ռիթմի ցուցադրում՝ մանկական և մեծերի պրակտիկայում: Մանեկենի վրա և մեկը մյուսի վրա կկատարեն ԿԱԴ կատարում: Մանեկենի վրա անոթների և միզուղիների կաթետերիզացիայի տեխնիկայի ցուցադրում:	Վաչիկ Հակոբյան
Օր 4		
2 ժամ	**Դասախոսություն** Վերքեր, վնասվածքների տեսակները, դասակարգումը: Վերքերի մշակում, վիրակապում: Արյունահոսություններ. տեսակները, դադարեցման մեթոդները: Սուր որովայն	Վիգեն Խաչատուրյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Արյունահոսության վերահսկում, արյունահոսությունը դադարեցնող միջոցների ցուցադրում, օգտագործման ձևերը, ձեռքի տակ ունեցած միջոցների ցուցադրում և օգտագործման ձևերը տարբեր արյունահոսությունների դեպքում (լարաններ, գործվածքային լարաններ, տուրնիկետներ):	Վիգեն Խաչատուրյան

	Մատնային ճանապարհով զարկերակային արյունահոսության դադարեցման տեխնիկայի ցուցադրում: Վիրակապերի տեսակների ցուցադրում՝ փափուկ և կոշտ: Մասնակիցների կողմից՝ մեկը մյուսի վրա, մարմնի տարբեր սեգմենտների վիրակապման տեխնիկայի ցուցադրում	
Օր 5		
2 ժամ	**Դասախոսություն** Ոսկրերի կոտրվածքներ, հոդախախտեր, Կռաշ սինդրոմ: Անշարժացման մեթոդները: Այրվածքներ (ջերմային, քիմիական, ճառագայթային, էլեկտրական): Արտաքին միջավայրի ազդեցությունը մարդու վրա (ջրահեղձություն, ցրտահարում, ընդհանուր սառեցում, ջերմահարություն): Թունավորումներ, միջատների, օձերի և կենդանիների խայթած, կծած վերքեր	Վիգեն Խաչատուրյան
3 ժամ	**Գործնական աշխատանք** Վերջույթների անշարժացման միջոցների ցուցադրում (փայտե, մետաղյա, ճկուն, պլաստիկ, պնևմատիկ բեկակալներ-շինաներ): Մանեկենի վրա մասնակիցներին տարբեր վնասվածքների ժամանակ տեղադրվող անշարժացնող միջոցների ցուցադրում (բաց և փակ կոտրվածքներ, հոդախախտներ, ամպուտացիաներ), օգտագործման մեթոդը: Ինչպես կատարել կմախքային ձգում տարբեր բեկակալների միջոցներով: Ինչպիսի անշարժացում և վիրակապում կատարել Կռաշ սինդրոմի ժամանակ: Ձեռքի տակ եղած միջոցներով և բժշկական պարագաներով վիրակապման տեխնիկայի ցուցադրում ցրտահարության և այրվածքների ժամանակ: Տուժածի տեղափոխման միջոցների ցուցադրում՝ փայտե, բրեզենտե, պլաստիկ, մետաղական պադգարակներ	Վիգեն Խաչատուրյան